ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «21 » հուլիսի 2012թ.

«ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ» փակ բաժնետիրական ընկերությունը /ԶՀԳ/, ի դեմս գլխավոր տնօրեն Ռ. Հարությունյանի, մի կողմից, և « Ինովացիոն և արդյունաբերական զարգացման հիմնադրամ», ի հիմնադրամի տնօրեն Ա. Գրիգորյանի, մյուս կողմից, կնքեցին Համագործակցության սույն պայմանագիրը՝ հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

ԶՀԳ-ն և «Ինովացիոն և արդյունաբերական զարգացման հիմնադրամ» համաձայն են, առանց իրավաբանական անձ կազմավորելու, միավորել իրենց կարողություններն ու ունակությունները և գործել համատեղ հետևյալ նպատակներով՝

ինովացիոն և արդյունաբերության գործարարության զարգացման համար բարենպաստ պայմաններ ստեղծում,

- փոքր և միջին արդյունաբերական ձեռնարկությունների մրցունակության բարձրացում,
- արտադրական համագործակցության զարգացման ոլորտային ծրագրերի իրականցման և մշակման աջակցություն, արդյունաբերության տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, արդյունաբերության բարեփոխում, փոքր և միջին ձեռնարկությունների անձնակազմի ուսուցում,
- փոքր, միջին և խոշոր արդյունաբերական ձեռնարկությունների միջև հարաբերությունների առավել արդյունավետ համագործակցության զարգացում,
- ինովացիոն բնապահպանական, էներգետիկական և արտադրական ոլորտներում ծրագրերի իրականացում և ծառայությունների մատուցում:

Սույն պայմանագրի շրջանակներում ԶՀԳ-ն և հիմնադրամը իրականացնում են հետևյալ գործառույթները.

ԶՀԳ գործառույթները.

- Հայաստանում նորարության ոլորտում գործունեություն ծավալող գիտա-տեխնիկական խմբերի համար կլոր սեղանների կազմակերպում՝
- - հեռանկարային ուղղությունները, ինչպես նաև մշակումները հայտնաբերելու նպատակով
- գոյություն ունեցող զարգացման խոչընդոտները վերհանելու նպատակով
- Հայկական նորարական տեխնոլոգիաների հանդեպ հետաքրքրություն ցուցաբերող արտասահմանյան կազմակերությունների համար գործնական այցերի և տեղական համապատասխան կազմակերությունների հետ հանդիպումների կազմակերպում
- Հայկական և արտասահմանյան գիտատեխնիկական խմբերի համար Հայաստանում մտավոր սեփականության, գիտատեխնիկական մշակումների պատենտավորման և այլ իրավական հարցերի վերաբերյալ խորհրդատվության տրամադրում
- Արտասահմանյան միջոցառումներին հայկական նորարական տեխնոլոգիաների, ինչպես նաև Հայաստանի գիտատեխնիկական ներուժի ներկայացում
- Արդի տեխնոլոգիաների մասին հայ գործարարներին ծանուցում՝ համապատասխան շնորհանդեսների և տեղեկատու նամակների միջոցով
- Նորարարության բնագավառում համատեղ քննարկումների արդյունքում վերհանված խոչընդոտների ուսումնասիրություն, դրանց ներկայացում ՀՀ գործարարության աջակցման խորհրդին
- Փոխանակել գործարար տեղեկատվություն՝ Կողմերի տեղեկատվական բազաների ընդլայնման նպատակով,

- Նպաստել պետություն-մասնավոր հատված արդյունավետ երկխոսության և համագործակցության կայացմանը,
- Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ գործառույթների իրականացում:

Ինովացիոն և արդյունաբերական զարգացման հիմնադրամի գործառույթները.

- Արդյունաբերական և գործարար հարաբերությունների զարգացման ոլորտում կազմակերպությունների միջև փոխգործակցության կազմակերպում և համակարգում,
- Գործարարության զարգացման և արդյունաբերության մրցունակության բարձրացման նպատակով համատեղ ծրագրերի իրագործում՝ կազմակերպությունների ներուժն օգտագործելով,
- Միջազգային տեսական և գործնական փորձի տարածում և ընդհանրացում արդյունաբերության զարգացման և համագործակցության հարաբերությունների ձևավորման ոլորտում,
- Մասնագետների վերապատրաստման կազմակերպումը համագործակցության, հարաբերությունների ձևավորման և արդյունաբերական զարգացման ոլորտում,
- Արդյունաբերության ոլորտի փոքր և միջին գործարարության աջակցման և զարգացման ծրագրերի իրագործման և իրականացման նպաստում,
- Արտադրական համագործակցության զարգացման ոլորտային ծրագրերի իրականցման և մշակման աջակցություն, արդյունաբերության տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, արդյունաբերության բարեփոխում, փոքր և միջին ձեռնարկությունների անձնակազմի ուսուցում,
- Ցուցահանդեսների և տոնավաճառների այդ թվում՝ (միջազգային) կազմակերպում,
- Արտադրական հարաբերությունների շուկայի հետազոտման և մոնիտորինգի իրականացման մասնակցության հիման վրա խորհուրդների մշակում՝ կապված առավել գրավիչ արդյունաբերությունում ներդրումային ծրագրերի ընտրության հետ, արդյունաբերական արտադրության ոլորտում շուկայական ծրագրերի, կազմակերպչական, տեղեկատվական և այլ աջակցության ցուցաբերում,
- Արդյունաբերության զարգացման և փոխհարաբերությունների ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպություններին տեղեկատվական, խորհրդատվական, մեթոդոլոգիական և այլ կարգի աջակցություն,
- Սեմինարների, կլոր սեղանների, համաժողովների, ֆորումների և այլ միջոցառումների կազմակերպում, որոնք նպաստում են գործունեության նպատակների իրականացմանը,
- Ուսուցողական, մեթոդաբանական նյութերի մշակում և հրապարակում, ինչպես նաև հայրենական, արտասահմանյան մեթոդաբանական նյութերի թարգմանություն և հրապարակում՝ Հիմնադրամի գործունեության ուղղություններին համապատասխան,
- Հիմնադրամի գործունեության հիմնական ուղղություններով համագործակցությունը արտասահմանյան և միջազգային կազմակերպությունների հետ:
- Հայաստանում շուկայական ներուժ ունեցող նորարական տեխնոլոգիաների հայթհայթում
- Հայկական շահագրգիռ կազմակերպությունների հետ նորարական տեխնոլոգիաների մասին տեղեկատվության փոխանակում:
- Փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ գործառույթների իրականացում

2.ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Կողմերը պարտավորվում են իրենց իրավասությունների և սույն պայմանագրի շրջանակներում աջակցել միմյանց:
2.2. Կողմերը պարտավորվում են, առանց միմյանց համաձայնության, երրորդ կողմին չփոխանցել նախապես գաղտնի համարվող տեղեկությունը:

3. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

3.1. Կողմերի փոխհարաբերությունները սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում, կարգավորվում են ՀՀ օրենսդրությամբ:
3.2. Սույն պայմանագիրն ուժի մեջ է ստորագրման օրվանից և գործում է առանց ժամկետի սահմանափակման:
3.3. Սույն պայմանագիրը կարող է դադարեցվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ մյուս Կողմին նախօրոք մեկ ամիս առաջ գրավոր տեղեկացնելուց հետո:
3.4. Սույն պայմանագիրը կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է մեկ օրինակ:

«Զարգացման հայկական գործակալություն» ՓԲԸ **Երևան, Մ. Մկրտչյան 5**	**«Ինովացիոն և արդյունաբերական զարգացման հիմնադրամ»** **Երևան, Արամի 32**
Ռոբերտ Հարությունյան **Գլխավոր տնօրեն**	**Արաքսյա Գրիգորյան** **Տնօրեն**